

# ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2,  
 Հեռ.՝ (374 10) 56 11 11; Ֆաքս՝ (374 10) 51 31 33  
 Էլ. հասցե՝ office@ameriabank.am ; [www.ameriabank.am](http://www.ameriabank.am)

## Ժամկետային ավանդ

Նվազագույն գումարն է 50,000 ՀՀ դրամ

ՀՀ դրամ	Տոկոսների վճարման եղանակ	Ընդունման ժամկետներն ըստ օրերի քանակի					
		31 –ից 90 օր	91 –ից 180 օր	181–ից 270 օր	271–ից 365 օր	366–ից 730օր	731–ից 1825օր
		Անվանական տարեկան տոկոսադրույք (Տարեկան տոկոսային եկամտաբերություն)					
Ամերիա Ավանդ <sup>1</sup>	Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում	5.1% (5.2%)	6.0% (6.2%)	7.0% (7.2%)	8.0% (8.3%)	8.7% (9.1%)	9.0% (9.4%)
	Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում	x	6.2% (6.3%)	7.2% (7.4%)	8.2% (8.5%)	8.8% (9.1%)	9.1% (9.4%)
	Տարեկան/տարեկան կապիտալացում	x	x	x	x	8.9% (8.9%)	9.2% (9.2%)
	Ժամկետի սկզբում	4.6% (4.8%)	5.3% (5.6%)	6.2% (6.6%)	7.0% (7.5%)	7.5% (8.5%)	8.0% (10.8%)
Ավանդ ընդհատման <sup>2</sup> հնարավորությամբ	Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում	4.1% (4.2%)	5.0% (5.1%)	6.0% (6.2%)	7.0% (7.2%)	7.7% (8.0%)	8.0% (8.3%)
	Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում	x	5.2% (5.3%)	6.2% (6.3%)	7.2% (7.4%)	7.8% (8.0%)	8.1% (8.3%)
	Տարեկան/տարեկան կապիտալացում	x	x	x	x	7.9% (7.9%)	8.2% (8.2%)
Ավանդ գումարի ավելացման <sup>3</sup> հնարավորությամբ	Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում	x	5.7% (5.9%)	6.7% (6.9%)	7.7% (8.0%)	8.4% (8.7%)	8.7% (9.1%)
	Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում	x	5.9% (6.0%)	6.9% (7.1%)	7.9% (8.1%)	8.5% (8.8%)	8.8% (9.1%)

11RBD SM 72-02-01, Խմբագրություն 23

Ուժի մեջ է 01/05/20թ.-ից

	Տարեկան/տարեկան կապիտալացում	x	x	x	x	8.6% (8.6%)	8.9% (8.9%)
Ավանդ գումարի նվազեցման <sup>4</sup> հնարավորությամբ	Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում	x	5.7% (5.9%)	6.7% (6.9%)	7.7% (8.0%)	8.4% (8.7%)	8.7% (9.1%)
	Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում	x	5.9% (6.0%)	6.9% (7.1%)	7.9% (8.1%)	8.5% (8.8%)	8.8% (9.1%)
	Տարեկան/տարեկան կապիտալացում	x	x	x	x	8.6% (8.6%)	8.9% (8.9%)
Ավանդ գումարի ավելացման <sup>3</sup> և ավանդի ընդհատման <sup>2</sup> հնարավորությամբ	Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում	x	4.7% (4.8%)	5.7% (5.9%)	6.7% (6.9%)	7.4% (7.7%)	7.7% (8.0%)
	Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում	x	4.9% (5.0%)	5.9% (6.0%)	6.9% (7.1%)	7.5% (7.7%)	7.8% (8.0%)
	Տարեկան/տարեկան կապիտալացում	x	x	x	x	7.6% (7.6%)	7.9% (7.9%)
Ավանդ գումարի նվազեցման <sup>4</sup> և ավանդի ընդհատման <sup>2</sup> հնարավորությամբ	Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում	x	4.7% (4.8%)	5.7% (5.9%)	6.7% (6.9%)	7.4% (7.7%)	7.7% (8.0%)
	Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում	x	4.9% (5.0%)	5.9% (6.0%)	6.9% (7.1%)	7.5% (7.7%)	7.8% (8.0%)
	Տարեկան/տարեկան կապիտալացում	x	x	x	x	7.6% (7.6%)	7.9% (7.9%)
Ավանդ գումարի ավելացման <sup>3</sup> և գումարի նվազեցման <sup>4</sup> հնարավորությամբ	Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում	x	5.4% (5.5%)	6.4% (6.6%)	7.4% (7.7%)	8.1% (8.4%)	8.4% (8.7%)
	Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում	x	5.6% (5.7%)	6.6% (6.8%)	7.6% (7.8%)	8.2% (8.5%)	8.5% (8.8%)
	Տարեկան/տարեկան կապիտալացում	x	x	x	x	8.3% (8.3%)	8.6% (8.6%)
Ավանդ գումարի ավելացման <sup>3</sup> , գումարի նվազեցման <sup>4</sup> և ավանդի ընդհատման <sup>2</sup> հնարավորությամբ	Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում	x	4.4% (4.5%)	5.4% (5.5%)	6.4% (6.6%)	7.1% (7.3%)	7.4% (7.7%)
	Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում	x	4.6% (4.7%)	5.6% (5.7%)	6.6% (6.8%)	7.2% (7.4%)	7.5% (7.7%)
	Տարեկան/տարեկան կապիտալացում	x	x	x	x	7.3% (7.3%)	7.6% (7.6%)

Ավանդ գումարի կուտակման <sup>5</sup> հնարավորությամբ	Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում	x	x	x	x	8.7% (9.1%)	9.0% (9.4%)
	Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում	x	x	x	x	8.8% (9.1%)	9.1% (9.4%)
	Տարեկան/տարեկան կապիտալացում	x	x	x	x	8.9% (8.9%)	9.2% (9.2%)

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

Ձեռ չԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՉԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՉԻՄԱՆ ՎՐԱ: ԻՄԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՄ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՔ ԴՈՒՔ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴԻ ՇԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՍՏԱԿԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ:

ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԱՆ Է՝

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

Որտեղ՝

- i** - մանրամասն սահմանված էֆեկտիվ տոկոսադրույքն է (ՄՄԷՏ),
- K<sub>n</sub>** - դրամական միջոցների n հոսքերը բանկի տեսանկյունից,
- N** - դրամական միջոցների հոսքերի քանակը՝ կապված տվյալ ֆինանսական գործիքի հետ,
- A** - ներգրավված կամ տրամադրված միջոցի սկզբնական գումարը,
- D<sub>n</sub>** - n-րդ դրամական հոսքի ստացման ժամանակահատվածը՝ արտահայտված առաջին հոսքից հետո անցած օրերի թվով (առաջին հոսքը միջոցի ներգրավման կամ տրամադրման ամսաթիվն է):

<sup>1</sup>«ԱՄԵՐԻԱ ԱՎԱՆԴ» է համարվում ժամկետային ավանդի այն տեսակը, որի դեպքում ավանդի պայմանագրի գործողության ժամկետում Ավանդատուն (ինչպես նաև երրորդ անձը) չունի ավանդը ավելացնելու կամ նվազեցնելու, ինչպես նաև ավանդը մեկ արժույթից մեկ այլ արժույթի փոխարկելու իրավունք:

<sup>2</sup>Հաճախորդի կողմից ավանդի պայմանագրի ժամկետից շուտ ամբողջությամբ դադարեցվելու դեպքում կատարվում է վերահաշվարկ՝ ավանդի պայմանագրի դադարեցման պահի դրությամբ ավանդի փաստացի գործողության ժամանակահատվածին համապատասխանող տվյալ ավանդատեսակի համար սահմանված տոկոսադրույքով:

Մինչև 30 օր ժամկետում ավանդը ժամկետից շուտ դադարեցնելու դեպքում կատարվում է վերահաշվարկ՝ տարեկան 0.1% տոկոսադրույքով: Տվյալ հնարավորությունը ընտրելիս տոկոսների վճարման «ժամկետի սկզբում» եղանակը կիրառելի չէ:

3 Հաճախորդն իրավունք ունի ավելացնել ավանդի գումարը՝ բացառությամբ ավանդային պայմանագրի գործողության վերջին 3 ամիսների: Ավանդի գումարը կարող է համալրվել ավանդային պայմանագրի գումարի առավելագույնը 30%-ի չափով: Ավանդատուի հաշվին Ավանդատուի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցներ՝ նրա ավանդի հաշվի մասին անհրաժեշտ տվյալների նշումով:

Տվյալ հնարավորությունը ընտրելիս տոկոսների վճարման «Ժամկետի սկզբում» եղանակը կիրառելի չէ:

4 Հաճախորդն իրավունք ունի նվազեցնել ավանդի գումարը՝ բացառությամբ ավանդային պայմանագրի գործողության առաջին 3 ամիսների: Ավանդի գումարը կարող է նվազել ավանդային պայմանագրի գումարի առավելագույնը 30%-ի չափով: Վերադարձված մասի նկատմամբ կուտակված տոկոսների վերահաշվարկ չի կատարվում:

Ավանդի գումարի նվազեցման դեպքում Բանկը Ավանդատուին հանձնում է ավանդային հաշվի քաղվածք: Քաղվածքի ստացման փաստն Ավանդատուն հաստատում է ստորագրությամբ, որով հավաստում է Ավանդի գումարի փաստացի նվազեցումը:

Տվյալ հնարավորությունն ընտրելիս տոկոսների վճարման «Ժամկետի սկզբում» եղանակը կիրառելի չէ:

5 Հաճախորդն իրավունք ունի ավելացնել ավանդի գումարն առավելագույնը 10 մլն ՀՀ դրամի չափով՝ անկախ ներդրման պահին ավանդի գումարի մեծությունից: Կուտակման հնարավորության դեպքում կիրառելի չեն ավանդի «ավելացման», «նվազեցման» և «ընդհատման» հնարավորությունները: Յուրաքանչյուր հաճախորդ կարող է ունենալ գործող միայն մեկ կուտակման հնարավորությամբ ավանդ:

**2 մլրդ ՀՀ դրամից կամ դրան համարժեք արտաստծայթից ավել ավանդների դեպքում՝ պայմանները սահմանվում են համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի:**

**Հավելյալ հնարավորություններ.**

Բանկի որոշմամբ Ավանդատուին կարող է տրամադրվել վարկ, վերականգնվող կամ չվերականգնվող քարտով վարկային գիծ (դեբետային կամ կրեդիտային քարտով)՝ հետևյալ պայմաններով.

Արժույթ	Տոկոսադրույք	Վարկ(վարկային գիծ)/Ավանդ հարաբերակցություն (LTV) <sup>1</sup>
Ավանդի արժույթով	Ավանդի տոկոսադրույք + 4%	Մինչև 90%
Ավանդի արժույթից տարբերվող արժույթով	Մանրածախ վարկավորման պայմաններով սահմանված տոկոսադրույք	Մինչև 70%

Վարկային քարտով պարտավորությունները ժամանակին չմարելու դեպքում Բանկն իրավունք ունի անակցեպտ գանձել պարտավորության գումարը Ավանդի գումարից:

**Ավանդի ներդրման և սպասարկման կանոններ**

1. Ավանդի ընդունման հիմքը Բանկի և Ավանդատուի միջև կնքված Բանկային ավանդի հայտ-պայմանագիրն է: Բանկային ավանդի հայտ-պայմանագրի ձևը գրավոր է:
2. Բանկում ժամկետային ավանդ ներդնող Ավանդատուի համար Բանկը բացում է բանկային հաշիվ ՀՀ դրամով, իսկ արտարժույթով ժամկետային ավանդ ներդնելու դեպքում՝ նաև բանկային հաշիվ Ավանդի արժույթով: Ավանդի արժույթով բանկային հաշիվ բացելու դեպքում հաշվի բացման միջնորդավճար չի գանձվում:

<sup>1</sup> Վարկային գիծ/ավանդ հարաբերակցության մեջ ավանդի գումարը ներառվում է ժամկետի սկզբում վճարված տոկոսագումարը նվազեցնելուց հետո:

3. Հաշվից քաղվածքները տրամադրվում են հետևյալ սակագներով.

<i>Քաղվածքի տրամադրման միջնորդավճար</i>	
Մինչև 1 տարի վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում	անվճար
1 տարուց ավել վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի տրամադրում կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում <sup>2</sup>	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր հաշվի յուրաքանչյուր տարվա քաղվածքի համար
Թղթային ձևով պահվող կամ 1 տարուց ավել վաղեմություն ունեցող էլեկտրոնային եղանակով պահվող փաստաթղթի կրկնօրինակի տրամադրում	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար

4. Բանկը տոկոսների հաշվարկը կատարում է՝ որպես բաժանարար հիմք ընդունելով տարին 365 օր:

5. Տոկոսների հաշվարկը իրականացվում է Ավանդի՝ Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:

6. Ավանդատուի բանկային հաշվին մուտքագրված տոկոսագումարը ենթակա է հարկման եկամտահարկով՝ ՀՀ տարածքում ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով 10% տոկոսադրույքով, ԼՂՀ տարածքում ԼՂՀ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով 5 % տոկոսադրույքով:

7. Ավանդային պայմանագրով կարող է նախատեսվել տոկոսների վճարման հետևյալ եղանակներից մեկը՝

**7.1 Տոկոսների ամսական վճարում**՝ տոկոսագումարի վճարման այն ձևն է, որի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարները, ավանդի ներդրման օրվանից հաշված, յուրաքանչյուր ամիս հաշվեգրվում են Ավանդատուի բանկային հաշվին: Հաշվեգրված տոկոսագումարից գանձվում է եկամտահարկ:

**7.2 Ամսական տոկոսների կապիտալացում**՝ տոկոսագումարի վճարման այն ձևն է, որի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարները, ավանդի ներդրման օրվանից հաշված, յուրաքանչյուր հաջորդ ամսվա ավանդի ներդրման օրը կամ հաջորդող բանկային օրը եկամտահարկով գանձվելուց հետո հաշվեգրվում են ավանդի մայր գումարին, և տոկոսների հաշվարկը շարունակվում է դրանց և ավանդի մայր գումարի հանրագումարի նկատմամբ: Բարդ տոկոսով ներդրված ավանդների պայմանագրի ժամկետը պետք է լինի առնվազն 60 օր:

**7.3 Տոկոսների եռամսյակային վճարում**՝ տոկոսագումարի վճարման այն ձևն է, որի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարները, ավանդի ներդրման օրվանից հաշված, յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ եռամսյակի վերջին օրը հաշվեգրվում են Ավանդատուի բանկային հաշվին: Հաշվեգրված տոկոսագումարից գանձվում է եկամտահարկ:

**7.4 Եռամսյակային տոկոսների կապիտալացում**՝ տոկոսագումարի վճարման այն ձևն է, որի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարները, ավանդի ներդրման օրվանից հաշված, յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ ավանդի ներդրման օրը կամ հաջորդող բանկային օրը եկամտահարկով գանձվելուց հետո հաշվեգրվում են ավանդի մայր գումարին, և տոկոսների հաշվարկը շարունակվում է դրանց և ավանդի մայր գումարի հանրագումարի նկատմամբ:

<sup>2</sup> Երեք տարուց ավելի վաղեմություն ունեցող քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ նյութերի (այդ թվում՝ տեղեկանքների, փաստաթղթերի, դրանց կրկնօրինակների) տրամադրումն իրականացվում է պայմանագրային հիմունքներով:

**7.5 Տոկոսների տարեկան վճարում**՝ տոկոսագումարի վճարման այն ձևն է, որի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարները, ավանդի ներդրման օրվանից հաշված, տարին մեկ անգամ տարվա վերջին օրը հաշվեգրվում են Ավանդատուի բանկային հաշվին: Հաշվեգրված տոկոսագումարից գանձվում է եկամտահարկ:

**7.6 Տոկոսների տարեկան կապիտալացում**՝ տոկոսագումարի վճարման այն ձևն է, որի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարները, ավանդի ներդրման օրվանից հաշված, տարին մեկ անգամ ավանդի ներդրման օրը կամ հաջորդող բանկային օրը եկամտահարկով գանձվելուց հետո հաշվեգրվում են ավանդի մայր գումարին, և տոկոսների հաշվարկը շարունակվում է դրանց և ավանդի մայր գումարի հանրագումարի նկատմամբ:

**7.7 Տոկոսների վճարում ժամկետի սկզբում**՝ տոկոսագումարի վճարման այն ձևն է, որի դեպքում ավանդի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար տոկոսագումարները հաշվեգրվում են Ավանդատուի հաշվին ավանդի ներդրման օրը: Հաշվեգրված տոկոսագումարից գանձվում է եկամտահարկ:

8. Բանկային ավանդի հայտ-պայմանագրով սահմանված Ավանդի համար տոկոսների չափը ավանդի գործողության ընթացքում Բանկի կողմից ենթակա չէ միակողմանիորեն նվազեցման:

9. Բանկային ավանդի հայտ-պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է բանկային ավանդի հայտ-պայմանագրով և ֆիզիկական անձանց համար ավանդի պայմաններով սահմանված դեպքերում և կարգով:

10. Բանկը պարտավոր է Ավանդը կամ դրա մի մասը վերադարձնել ավանդատուի առաջին իսկ պահանջով: Սույն պայմաններով սահմանված կարգով, Ավանդատուի առաջին իսկ պահանջով Ավանդի գումարը ժամկետից շուտ պահանջվելու դեպքում Բանկը Ավանդատուի կողմից ներկայացված դիմումի հիման վրա կատարում է վերահաշվարկ և վերադարձնում է վերահաշվարկման արդյունքում մնացած Ավանդի գումարը: Այդ դեպքում հաճախորդին վճարվում է տոկոսագումար՝ ավանդային պայմանագրով սահմանված տոկոսադրույքի փոխարեն տարեկան 0.1% տոկոսադրույքով: Այն դեպքում, երբ ավանդատուին արդեն վճարվել են տոկոսներ, որոնք վերահաշվարկման արդյունքում ենթակա են հետ գանձման, Ավանդի մայր գումարից նվազեցվում է վճարված տոկոսագումարների և տարեկան 0.1% տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարների տարբերությունը: Սույն կետը կիրառվում է, եթե ավանդի պայմաններով և/կամ պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

11. Եթե ավանդատուն ավանդի ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ավանդի գումարը, ապա ըստ հայտ-պայմանագրում կատարված նշումի՝ կա՛մ երկարաձգվում է պայմանագրի գործողության ժամկետը հայտ-պայմանագրով սահմանված պայմաններով և երկարաձգման պահին բանկում գործող տոկոսադրույքով, կա՛մ ավանդի գումարը փոխանցվում է ավանդատուի բանկային հաշվին, որի նկատմամբ կիրառվում են բանկային հաշվի համար նախատեսված պայմանները:

12. Ավանդատուի մահվան դեպքում Ավանդի տոկոսների հավելագրումը շարունակվում է մինչև բանկային ավանդի հայտ-պայմանագրի գործողության ժամկետի ավարտը, որից հետո Բանկը Ավանդը և հավելագրված տոկոսները փոխանցում է Ավանդատուի բանկային հաշվին: Տվյալ դեպքում նշված գումարները Ավանդատուի ժառանգներին են տրվում նշված գումարների նկատմամբ վերջիններիս սեփականության իրավունքը հաստատող օրենքով սահմանված կարգով ժառանգության պատշաճ ձևակերպման և այդ փաստը հավաստող փաստաթղթերը բանկ ներկայացնելու դեպքում:

13. Ավանդների հատուցման երաշխավորող է հանդիսանում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը՝ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Օրենքով սահմանված են ավանդների երաշխավորման հետևյալ չափերը.

- միայն ՀՀ դրամով ավանդի առկայության դեպքում երաշխավորված ավանդի չափը կազմում է 10.0 մլն ՀՀ դրամ,
- միայն արտարժույթային ավանդի առկայության դեպքում ավանդը երաշխավորվում է 5.0 մլն ՀՀ դրամի չափով,
- եթե ավանդատուն ունի դրամային և արտարժույթային ավանդներ, և դրամային ավանդի գումարը 5.0 մլն ՀՀ դրամից ավելի է, երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև 10.0 մլն ՀՀ դրամի չափով,

- եթե դրամային ավանդը պակաս է 5.0 մլն ՀՀ դրամից, երաշխավորվում են դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 5.0 մլն դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով:

14. Ավանդային հայտ-պայմանագրից ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Սույնով Բանկը հայտարարում է, որ կնքել է իր կողմից Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր հետևյալ պայմաններով.

Համաձայնագիրը նախատեսում է ցանկացած ժամանակ համաձայնագիրը միակողմանի լուծելու Բանկի իրավունքը, Համաձայնագիրը կնքվել է մեկ տարի ժամկետով, Բանկը հրաժարվել է ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների դեպքում, որոնց գույքային պահանջի չափը չի գերազանցում 250 000 ՀՀ դրամը, և գործարքի գումարի չափը չի գերազանցում 500 000 ՀՀ դրամը:

### **Օրինակներ**

1. Հաճախորդը ցանկանում է ներդնել Ամերիա ավանդ ՀՀ դրամով 366 օր ժամկետով՝ տոկոսագումարը ստանալով ժամկետի սկզբում:  
 Ավանդի գումար՝ 100,000 ՀՀ դրամ  
 Ավանդի ներդրման ամսաթիվ՝ 01/06/2018  
 Ավանդի մարման ամսաթիվ՝ 02/06/2019  
 Տարեկան պարզ տոկոսադրույք՝ **7.5%**  
 Տոկոսների վճարման ամսաթիվ՝ 01/06/2018 (ավանդը գործելու է 366 օր, հաշվարկվում է ավանդի ներդրման, բայց չի հաշվարկվում վճարման ամսաթվերը)  
**Վճարվելիք տոկոսագումար**= $100,000 * 7.5 / 100 / 365 * 366 = 7,520.54$  ՀՀ դրամ  
**Վճարվելիք գուտ տոկոսագումար (նվազեցվում է 10% եկամտահարկի չափով)** = $7,520.54 - 7,520.54 * 10 / 100 = 6,768.49$  ՀՀ դրամ
2. Հաճախորդը ցանկանում է ներդնել Ամերիա ավանդ ԱՄՆ դոլարով 271 օր ժամկետով՝ ավանդի ընդհատման և ավելացման հնարավորություններով, տոկոսների վճարման եռամսյակային եղանակով:  
 Ավանդի գումար՝ 10,000 ԱՄՆ դոլար  
 Ավանդի ներդրման ամսաթիվ՝ 01/06/2018  
 Ավանդի մարման ամսաթիվ՝ 27/02/2019  
 Տարեկան պարզ տոկոսադրույք՝ **2.6 %**  
 Տոկոսների վճարման առաջին ամսաթիվ՝ 01/09/2018 (ավանդը գործել է 92 օր, հաշվարկվում է ներդրման ամսաթիվը )  
**Վճարվելիք տոկոսագումար**= $10,000 * 2.6 / 100 / 365 * 92 = 65.53$  ԱՄՆ դոլար  
**Վճարվելիք գուտ տոկոսագումար (նվազեցվում է 10% եկամտահարկի չափով)** = $65.53 - 65.53 * 10 / 100 = 58.98$  ԱՄՆ դոլար  
 Տոկոսների վճարման երկրորդ ամսաթիվ՝ 01/12/2018 (ավանդը գործել է 91 օր)  
**Վճարվելիք տոկոսագումար**= $10,000 * 2.6 / 100 / 365 * 91 = 64.82$  ԱՄՆ դոլար  
**Վճարվելիք գուտ տոկոսագումար (նվազեցվում է 10% եկամտահարկի չափով)** = $64.82 - 64.82 * 10 / 100 = 58.33$  ԱՄՆ դոլար  
 Տոկոսների վճարման երրորդ ամսաթիվ՝ 27/02/2019 (ավանդը գործել է 88 օր, ավանդի գործողության վերջին օրը չի հաշվարկվում)  
**Վճարվելիք տոկոսագումար**= $10,000 * 2.6 / 100 / 365 * 88 = 62.68$  ԱՄՆ դոլար  
**Վճարվելիք գուտ տոկոսագումար (նվազեցվում է 10% եկամտահարկի չափով)**= $62.68 - 62.68 * 10 / 100 = 56.41$  ԱՄՆ դոլար

3. Հաճախորդը ներդրել է Ամերիա ավանդ ԱՄՆ դոլարով 271 օր ժամկետով՝ ավանդի ընդհատման և ավելացման հնարավորություններով, տոկոսների վճարման եռամսյակային եղանակով, և ցանկանում է դադարեցնել ավանդը 91 օր հետո:

Ավանդի գումար՝ 10,000 ԱՄՆ դոլար

Ավանդի ներդրման ամսաթիվ՝ 01/06/2018

Դադարեցման ամսաթիվ՝ 31/08/2018

Դադարեցման պահին վերահաշվարկի տոկոսադրույք՝ 1% (ըստ Ամերիա ավանդի պայմանների՝ ավելացման և ավանդի ընդհատման հնարավորություններով, 91 օր ժամկետի դեպքում)

Տոկոսների վճարման ամսաթիվ՝ 31/08/2018 (ավանդը գործել է 91 օր, հաշվարկվում է ավանդի ներդրման, բայց չի հաշվարկվում վճարման ամսաթվերը)

**Վճարվելիք տոկոսագումար**= $10,000 \cdot 1/100/365 \cdot 91 = 24.93$  ԱՄՆ դոլար

**Վճարվելիք գուտ տոկոսագումար (նվազեցվում է 10% եկամտահարկի չափով)**= $24.93 - 24.93 \cdot 10/100 = 22.43$  ԱՄՆ դոլար

4. Հաճախորդը ցանկանում է ներդնել Ամերիա ավանդ ՌԴ ռուբլով 181 օր ժամկետով՝ նվազեցման հնարավորությամբ, տոկոսների վճարման եռամսյակային կապիտալացման եղանակով:

Ավանդի գումար՝ 10,000 ՌԴ ռուբլի

Ավանդի ներդրման ամսաթիվ՝ 01/06/2020

Ավանդի մարման ամսաթիվ՝ 29/11/2020

Տարեկան պարզ տոկոսադրույք՝ 4.6%

Տոկոսների կապիտալացման ամսաթիվ՝ 01/09/2020 (ավանդը գործել է 92 օր, հաշվարկվում է ներդրման ամսաթիվը)

**Վճարվելիք տոկոսագումար**= $10,000 \cdot 4.6\%/100/365 \cdot 92 = 115.94$  ՌԴ ռուբլի

**Վճարվելիք գուտ տոկոսագումար (նվազեցվում է 10% եկամտահարկի չափով)**= $115.94 - 115.94 \cdot 10/100 = 104.34$  ՌԴ ռուբլի

**Մայր գումար**= $10,000 + 104.34 = 10,104.34$  ՌԴ ռուբլի

02/09/2020 -ին ավանդի մայր գումարը նվազել է 2,104.34 ՌԴ ռուբլով

Տոկոսների վճարման ամսաթիվ՝ 29/11/2020 (ավանդը գործել է 89 օր (ավանդի վճարման օրը չի հաշվարկվում), որից 1 օրը ավանդի գումարը կազմել է 10,104.34 ՌԴ ռուբլի, իսկ մնացած 88 օրերին՝ 8,000 ՌԴ ռուբլի)

**Վճարվելիք տոկոսագումար**= $10,104.34 \cdot 4.6\%/100/365 \cdot 1 + 8,000 \cdot 4.6\%/100/365 \cdot 88 = 1.27 + 88.72 = 89.99$  ՌԴ ռուբլի

**Վճարվելիք գուտ տոկոսագումար (նվազեցվում է 10% եկամտահարկի չափով)** =  $89.99 - 89.99 \cdot 10/100 = 80.99$  ՌԴ ռուբլի